

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ

Ռուզաննա Առուստամյան
Երևանի պետական համալսարան

Ներկայումս գենդերային լեզվաբանությունը կարևոր տեղ է զբաղեցնում լեզվաբանության ոլորտում: Լեզվի դիտարկումը գենդերային պատկանելության տեսանկյունից մեծ հետաքրքրություն է առաջացնում քաղաքական խոսույթի ուսումնասիրության շրջանակներում: Ընդհանուր առմամբ գենդերային լեզվաբանությունը հետազոտում է «սեռ» և «լեզու» հարաբերակցությունը:

Լեզվաբանության մեջ «գենդեր» հասկացությունը դիտվում է որպես մշակութային հատկանիշների յուրահատուկ հավաքածու, որը որոշում է կանանց և տղամարդկանց հասարակական վարքագիծը և հարաբերությունները: Կենսաբանական տեսանկյունից, ի տարբերություն «սեռ» հասկացությանը, գենդերը արտացոլում է մարդու պատկանելությունը հասարակական-մշակութային ոլորտին, այսպես կոչված՝ «հասարակական սեռին» (Грицахов 2003:128): Լեզվաբանության մեջ գենդերի և նրա դերի մասին խոսելիս կարևոր է նշել, որ տվյալ հասկացությունը սերտորեն կապված է գենդերային ինքնության հետ, որը հիմնված է տղամարդու և կնոջ հասարակական գենդերային մոդելի վրա:

Առավել ուշագրավ է գենդերային հատկանիշների դրսևորումը քաղաքական գործիչների ելույթներում: Գոյություն ունի կարծրատիպ, թե կանայք տեղ չունեն քաղաքականության ոլորտում, և այն հասու է միայն տղամարդկանց: Այնուամենայնիվ, ներկայումս բազմաթիվ կանայք զգալի առաջընթացի են հասել քաղաքականության մեջ: Տվյալ ոլորտում խոսույթի մշակումը և բառապաշարի ընտրության հարցերը պայմանավորված են խիստ կանոններով, որոնք թելադրված են տեքստի պաշտոնական-գործնական ոճով:

Ռ. Լակոֆը և Ի. Հոֆմանը կարծում են, որ գենդերային գործոնը հնարավոր չէ չեզոքացնել որևէ խոսույթի կիրառման ընթացքում: Լակոֆը ուշադրություն է դարձնում այն փաստին, որ գենդերային նշանագիտությունը (semiotics) հատուկ է ցանկացած անձի հասարակական դրսևորմանը (Lakoff 2004:241-254):

Քաղաքականության մեջ առաջնային են համարվում համոզվածությունը և խոսքի անժխտելիությունը: Այդ իսկ պատճառով ցանկացած անձ, անկախ սեռական պատկանելությունից, ծագում է ազդել մարդկանց գիտակցության վրա և ստիպել հավատալ իր խոսքին: Տվյալ նպատակով քաղաքականության մեջ ստեղծվել են համոզելու բազմազան մեթոդներ: Սակայն չպետք է մոռանալ, որ ցանկացած արտահայտություն նախ և առաջ մարդկային գիտակցության արդյունք է, որտեղ արտացոլվում է հռետորի անձը: Այսպիսով, կարելի է խոսել այն մասին, որ քաղաքական ելույթներում կարելի է գտնել գենդերի բազմաթիվ դրսևորումներ:

Գոյություն ունեն տարբեր կարծիքներ, թե ինչը կարելի է համարել գենդերային հատկանիշ, և ինչը՝ այլ երևույթների արդյունք: Տվյալ հոդվածում մենք

հիմնվում ենք գենդերային այն հատկանիշների վրա, որոնք ընդունված են բազմաթիվ գիտնականների կողմից: Նրանց կարծիքով կանանց հատուկ են հուզականությունը, ածականների հաճախակի օգտագործումը, բարդ քերականական կառույցները, իսկ տղամարդկանց ելույթներում գերակշռում են պարզ նախադասությունները, բառերի կրկնությունը և բայերի հաճախակի օգտագործումը:

Ամերիկյան երկու հայտնի քաղաքական գործիչների՝ Բարաք Օբամայի և Հիլարի Բլինթոնի ելույթների ուսումնասիրությունը թույլ են տալիս դիտարկել գենդերային գործոնի ազդեցությունը քաղաքական խոսույթում:

Որոշ դեպքերում գենդերային յուրահատկությունների դրսևորումը օգտագործվում է հասարակության մեջ քաղաքական գործչի դիրքի ամրապնդման համար: Տիկին Բլինթոնը մշտապես իր ելույթներում ընդգծում է, որ նա կին է, օգտագործելով “mother” բառը: Օրինակ՝

*“I’m very proud to be called the **mother** of the USA Pavilion.”*

(<http://www.state.gov/secretary/rm/2012/03/185402.htm>>)

*“A proud **mother**. A proud Democrat. A proud American.”*

(<http://abcnews.go.com/Politics/Conventions/story?id=5663211&page=1>>)

“**Mother**” բառը օգտագործված է ոչ միայն սեփական գենդերային պատկանելության մատնանշման համար, այլև հստակ բացահայտելու սեփական դիրքորոշումը կանանց իրավունքների վերաբերյալ:

Օբաման, հակառակը, չի ընդգծում իր սեռական պատկանելության փաստը, ցույց տալով, որ ուրախ է ցանկացած ընտրողի համար և հավատարիմ է իր իսկ ժողովրդավարական հայացքներին: Որպես գենդերային ինքնության դրսևորում ամերիկյան նախագահը փորձում է ցույց տալ իր հուսալիությունը և ներշնչել ժողովրդին վստահություն «պայծառ ապագայի» նկատմամբ: “**Hope**” բառի հաճախակի կիրառումը և “**fight**” բառի հազվադեպ օգտագործումը իր ելույթներում այրական դրսևորման օրինակներ են: Օրինակ՝

*“... **hope** If American car companies **hope** to be a part of that future, if they **hope** to compete - if they **hope** to survive - they must make the necessary adjustments so that they can start.”*

Հաջորդ գործոնը, որը ձևավորում է գենդերային տարբերությունները քաղաքական խոսույթում՝ պաշտոնական-գործնական ոճն է: Առաջին հայացքից այն չի նախատեսում որևէ շեղում նորմայից: Սակայն նույնիսկ այստեղ կան որոշ տարբերություններ: Օբամայի ելույթը ավելի պարզ է, ինչպես քերականության, այնպես էլ բառապաշարի տեսանկյունից: Նա փորձում է օգտագործել ներգործական սեռ, բառերի պարզ շարադասություն, հասարակ և հեշտ ընկալելի բառապաշար: Օրինակ՝

*“Two hundred and twenty one years ago, in a hall that still **stands** across the street, a group of men **gathered** and, with these simple words, **launched** America’s improbable experiment in democracy.”*

Հիլարի Բլինթոնի բարձրակիրը լինելը առաջին հերթին արտահայտվում է ճկուն լեզվամտածողությամբ և բառային բարդ կառույցներով: Իր ելույթներում տիկին Բլինթոնը օգտագործում է բառերի շրջուն շարադասություն և բարդ նախադասություններ: Օրինակ՝

“Beginning in 1947, delegates from six continents devoted themselves to drafting a declaration that would enshrine the fundamental rights and freedoms of people everywhere.”

Բլինթոնի խոսքում առկա են կրավորական սեռով բարդ նախադասություններ, որոնք դժվար ընկալելի են դարձնում նրա արտահայտած գաղափարները: Օրինակ՝

“All human beings are born free and equal in dignity and rights. And with the declaration, it was made clear that rights are not conferred by government; they are the birthright of all people.”

(<http://www.state.gov/secretary/rm/2011/12/178368.htm>)

Գենդերային լեզվաբանության տեսանկյունից տղամարդկանց և կանանց խոսքում քերականական տարբերությունները պայմանավորված են տարբեր հաղորդակցական նպատակներով, սակայն գլխավոր խնդիրը ընտրողների վրա ազդելն է: Օբամայի ելույթներում նկատում ենք նախադասությունների քերականական բարդության միտումնավոր նվազեցում, ինչպես նաև պարզ և չեզոք բառապաշարի օգտագործում: Վերը նշվածը վկայում է, որ Օբաման ցանկանում է հասանելի և մոտ լինել ընտրողներին: Այս նպատակին հասնելու համար նա օգտագործում է ոչ հուզական, պարզ նախադասություններ:

Հիլարի Բլինթոնի ելույթներում բարդ քերականական կառույցների օգտագործումը բնութագրում է նրա ելույթները որպես խիստ կանացի, քանզի նա ձգտում է հաստատվել քաղաքականության մեջ՝ ցուցադրելով սեփական կրթության և գրագիտության աստիճանը: Նա փորձում է հավասարեցնել սեփական դիրքերը տղամարդկանց դիրքերին քաղաքականության դաշտում: Այդպես նա փոխհատուցում է գենդերային տարբերությունները՝ օգտագործելով երկար, բարդ ելույթներ քաղաքական բարդ բառապաշարով:

Թեպետ երկու քաղաքական գործիչներն էլ պայքարում են ժողովրդավարության և հավասարության համար, նրանք չեն փորձում թաքցնել ֆեմինիստական և այրական հատկանիշները: Այսպիսով, Բլինթոնի ելույթի ֆեմինիստական դրսևորումները ընդգծվում են հետևյալ արտահայտություններում՝

“...my sisterhood of the traveling pantsuits...”

(<http://www.thefrisky.com/2008-08-27/hillary-clinton-at-the-dnc/>)

“I’m a United States Senator because in 1848 a group of courageous women and a few brave men gathered in Seneca Falls.”

(<http://edition.cnn.com/2008/POLITICS/08/26/clinton.transcript/index.html>)

Իր ելույթներում նա կիրառում է նաև փոխաբերություններ: Օրինակ՝

*“We have a lot of experience from around the world that is a **cautionary tale** about the government’s actions.”*

(<http://votesmart.org/public-statement/181652/remarks-of-senator-hillary>)

Այստեղ “*cautionary tale*” արտահայտությունը նշանակում է «*ուսանելի պատմություն*», որը օգտագործված է փոխաբերական իմաստով՝ մատնանշելու, որ կառավարությունը պետք է դասեր քաղի քաղաքական տարբեր ձախողումներից:

*“Never again will a national barrier stand in the way of a **family’s love**.”*

(<http://gos.sbc.edu/c/clinton.html>)

Բարաք Օբամայի ելույթները ունեն խիստ այրական բնույթ, քանզի նա օգտագործում է արական սեռի գոյականներ և դրանով իսկ հաստատում, որ տղամարդ է, ով առաջնորդում է Ամերիկյան դեպի հաջողություն: Օրինակ՝

*“...**son** could achieve whatever he put his mind to...”*

(http://uspolitics.about.com/od/speeches/a/obama_accept_3.htm)

*“...provide **men** of every color and creed their full rights and obligations as citizens of the United States.”*

(http://uspolitics.about.com/od/speeches/a/obama_accept_3.htm)

Ժամանակ ցույց տվող բառերի օգտագործումը նույնպես առիթ է տալիս դասակարգելու ելույթները ըստ գենդերային հատկանիշների: Տղամարդու ելույթի բնութագրող հատկանիշն է կապակցվածությունը տվյալ պահի հետ: Տղամարդկանց հատուկ է մտածել և մտորել ներկա խնդիրների մասին, այլ ոչ թե վերհիշել անցյալը: Բարաք Օբաման իր ելույթներում հիմնականում խոսում է այն մասին, թե այժմ ինչ է կատարվում և ինչ է լինելու մոտ ապագայում:

*“**Tonight**”; “**Four years ago**”; “**Now is the time** to help families with paid sick days and better family leave, because nobody in America should have to choose between keeping their jobs and caring for a sick child or ailing parent”*

(<http://www.happinessonline.org/LoveAndHelpChildren/p12.htm>)

Ելույթները ազդեցիկ և համոզիչ դարձնելու համար Բ. Օբաման օգտագործում է բազմաթիվ բայեր: Օրինակ՝

*“I **stand** here today **humbled** by the task before us, grateful for the trust you **have bestowed**, mindful of the sacrifices **borne** by our ancestors.”*

(<http://www.whitehouse.gov/blog/inaugural-address>)

*“So it **has been**. So it **must be** with this generation of Americans.”*

(<http://www.whitehouse.gov/blog/inaugural-address>).

“Today I **say** to you that the challenges we face **are** real.”

(<<http://www.whitehouse.gov/blog/inaugural-address>>)

“Time and again these men and women **struggled and sacrificed and worked** till their hands **were** raw so that we **might live** a better life.”

(<<http://www.whitehouse.gov/blog/inaugural-address>>)

Բարաք Օբաման հիմնականում օգտագործում է պարզ բայական կառույցներ: Ինչպես ցույց են տալիս հետևյալ օրինակները, քաղաքական գործիչը մատնանշում է գործողության կատարումը՝ *we face, men and women struggled and sacrificed, we might live*: Նախադասություններում ներգործական սեռի կիրառումը մատնանշում է Բարաք Օբամայի քաղաքականության ակտիվ բնույթը:

Քաղաքական ելույթների վերոհիշյալ հետազոտությունը վկայում է այն մասին, որ գենդերային տարբերությունները զբաղեցնում են քաղաքական խոսույթի զգալի մասը և օգնում են քաղաքական գործիչներին իրականացնելու նրանց գլխավոր նպատակը՝ ազդելու ունկնդիրների վրա: Կնոջ քաղաքական ելույթը լի է հուզականությամբ և բարդ բառային միավորներով: Մինչդեռ տղամարդկանց ելույթները առանձնանում են պարզ նախադասություններով, դրանով իսկ ավելի պարզ և հասանելի են ունկնդիրներին: Նման կառույցները թույլ են տալիս քաղաքական գործիչին ավելի մոտ լինել ժողովրդին և ցույց տալ, որ նա է ազգի անբաժան մասն է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Грицанов, А.А. (2003) *Новейший философский словарь*. Москва: Книжный дом.
2. Lakoff, R. (2004) *Language and Woman's Place*. Oxford: Oxford University Press.

ԳՐԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. *Barack Obama's Acceptance Speech*.
<http://uspolitics.about.com/od/speeches/a/obama_accept_3.htm>
2. *Hillary Clinton's Speech at the Democratic National Convention*, Aug. 26, 2008.
<<http://abcnews.go.com/Politics/Conventions/story?id=5663211&page=1>>
3. *Hillary Clinton Thanks Her Sisterhood of the Traveling Pantsuits and Urges Them to Keep Going*. <<http://www.thefrisky.com/2008-08-27/hillary-clinton-at-the-dnc>>
4. *Hillary Rodham Clinton, Secretary of State "U.S. Institute of Peace"* Washington, DC, March 7, 2012. <<http://www.state.gov/secretary/rm/2012/03/185402.htm>>
5. *President Barack Obama's Inaugural Address*.
<<http://www.whitehouse.gov/blog/inaugural-address>>
6. *Remarks in Recognition of International Human Rights Day Hillary Rodham Clinton Secretary of State Palais des Nations Geneva, Switzerland December 6, 2011*.
<<http://www.state.gov/secretary/rm/2011/12/178368.htm>>
7. *Remarks made by First Lady Hillary Rodham Clinton at the Democratic National Convention in Chicago*.
<<http://www.happinessonline.org/LoveAndHelpChildren/p12.htm>>

8. *Remarks of Senator Barack Obama: 'A More Perfect Union' Philadelphia, 2008.* <<http://obamaspeeches.com>>
9. *Remarks while First Lady to the United Nations Fourth World Conference on Women, Plenary Session in Beijing, China: 5 September 1995.* <<http://gos.sbc.edu/c/clinton.html>>
10. *State Family Planning Providers, Senator Clinton.* <<http://votesmart.org/public-statement/181652/remarks-of-senator-hillary>>

Гендерные различия в политическом дискурсе

Политическая речь женщин-политиков более эмоционально насыщена, а лексические единицы имеют более сложную структуру. Хиллари Клинтон использует грамматически и лексически сложные фразы, стараясь подчеркнуть свою образованность и компетентность. Для ее речи характерно использование обратного порядка слов и предложений со структурно-семантическими осложнениями. Такая особенность политического высказывания, обусловлена тем, что женщины стремятся играть важную роль в политической жизни страны. Политический дискурс мужчин-политиков, напротив, содержит более простые конструкции, чтобы быть максимально достигаемыми избирателям. Речь Барака Обамы более непринужденная и простая с грамматической и лексической точки зрения.

Gender Differences in Political Discourse

Gender struggle in political discourse is actual nowadays, because woman's role in politics is a kind of struggle and always demands more energy, knowledge and education. Our research in the given article shows that political discourse of men and women politicians differ in sentence constructions, emotiveness and choice of language units. The speeches of Hillari Clinton are mainly constructed with complex sentences and difficult lexicological units, while Barack Obama uses simple sentences with simple words in order to be attainable for people. Women try to use more literate words and complex sentence structures.